Կամքի ազատությունը և փրկագնումը Հիսուս Քրիստոսի միջոցով

Դևի գայթակղությունները

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 29.39 և 2 Նեփի 2.16–18 հատվածները և քննարկեք հետևյալ հարցերը.

- Իմանալով, որ մենք ընտրել ենք հետևել Երկնային Հոր ծրագրին այս կյանքից առաջ՝ ի՞նչն է դժվարացնում այն, որ միշտ ընտրենք Նրան հետևել այստեղ՝ երկրի վրա:
- Որո՞նք են Սատանայի ամենաարդյունավետ մարտավարությունները՝ ստիպելու մարդկանց չհետևել Աստծո խորհրդին երկրի վրա:
- Ի՞նչ օրհնություններ է մեզ տվել Աստված՝ օգնելու համար հաղթահարել Սատանայի գայթակղությունները:

Ընտրությունների հետևանքները

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 29.40–41 և Ալմա 41.10–11, 42.9, 14 հատվածները և քննարկեք հետևյալ հարցերը.

- Ինչո՞ւ ենք մենք ենթարկվում սատանայի կամքին, երբ ընտրում ենք ապստամբել Աստծո դեմ:
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է «հոգևոր մահ» եզրույթը Երկնային Հորից հեռանալու լավ նկարագրություն հանդիսանում:
- Ինչպե՞ս կնկարագրեք այն զգացմունքները, որոնք մենք ունենում ենք այն բանից հետո, երբ օգտագործում ենք մեր կամքի ազատությունը՝ Երկնային Հոր կամքին դեմ գնալու համար:

Փրկագնում՝ Աստծո Միածին Որդու միջոցով

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 29.42–43 և 2 Նեփի 2.6–9 հատվածները և քննարկեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է արել Հիսուս Քրիստոսը, որպեսզի փրկագնումը հնարավոր դարձնի՝ նույնիսկ երբ մենք վատ ընտրություններ ենք կատարում:
- Ի՞նչ կպատմեիք Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին, որը կարող է հույս տալ մեկին, ով զգում է, որ ինքը շատ է հեռացել Նրանցից:
- Ի՞նչ օրինակներով կարող եք կիսվել՝ ցույց տալու համար Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի քավիչ, ներող էությունը:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_143-1